«Հաստատում եմ»
«Երևան» բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ
տնօրեն՝ Հովիկ Բալյան

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈԱԽՈՒՄԱԿԱՆ

ԺԴ.00.12 «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Աննա Աշոտի Ավետիսյանի՝ **«Ատամների դիսկոլորիտների բուժման արդյունքների կանխատեսումը և բարդությունների կանխարգելումը՝ պայմանավորված բուժման մեթոդների ընտրությամբ»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքի արդիականությունը

Դիսկոլորիտները ատամների բնական գույնի խախտումներով ուղեկցվող կառուցվածքաֆունկցիոնալ և էսթետիկ խանգարումներ են, որոնք պոլիէթիոլոգիկ են և ունեն լայն տարածում: Ժամանակակից ստոմատոլոգիայում դիսկոլորիտների բուժման մեթոդների լայն ցանկը հնարավորություն է տալիս ընտրություն կատարել թերապևտիկ և ռեկոնստրուկտիվ մեթոդների միջև: Պացիենտի կյանքի՝ ստոմատոլոգիական առողջությամբ պայմանավորված որակի նվազումը, շփման բարդույթների ձևավորումը հանգեցրել են դիսկոլորիտների բուժման, ինչպես նաև էսթետիկ նկատառումներով վերոհիշյալ մեթոդների կիրառման մեծ պահանջարկի: Խնդրի արդիականության և հասարակության ընդգրկուն շրջանակներում միջամտությունների մեծ պահանջարկի հիմնապատկերին՝ դիսկոլորիտների վերացման համար առկա կոնսերվատիվ (սպիտակեցում) և ռեկոնստրուկտիվ (կարծր հյուսվածքների ռեզեկցիա՝ հետագա կոմպոզիտային վերականգնումով և/կամ վինիրների կամ լյումինիրների պատրաստումով և այլն) մեթոդների կիրառման անհրաժեշտության հստակ տարանջատման բացակայությունը լուրջ մարտահրավեր է ներկայացնում՝ բուժական միջոցառումների իրականացման անվտանգության և հնարավոր բարդությունների կանխարգելման տեսանկյունից: Ատենախոսությունը նվիրված է այդպիսի մարտահրավերների կասեցմանը, արդիական է և միտված է խնդրի լուծման արդյունավետության բարձրացմանը՝ հնարավոր բարդությունների կանխմամբ:

Ռեստավրացվող ատամների՝ առանց այդ էլ սահմանափակված բիոմեխանիկական պոտենցիալի՝ նվազագույն ինվազիվ տեխնոլոգիաների միջոցով պահպանման անհրաժեշտությունը, դիսկոլորիտներով պացիենտների

ստոմատոլոգիական օգնության մակարդակի բարձրացման կարևորությունը, ինչպես նաև բուժման տարբեր մեթոդների արդյունավետության և անվտանգության մասին մասնագետների միասնական կարծիքի անհստակությունը, ատամների ռեզիստենտականության բարձրացման անհրաժեշտության վերաբերյալ հարցերի ամբողջական ուսումնասիրությունների, բուժման բարդությունների կանխարգելման ամբողջական սխեմաների բացակայությունը շեշտում են խնդրի արդիականությունը և լուծման ռացիոնալ տարբերակների որոնման անհրաժեշտությունը:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ իրականացվել է՝

- տարբեր ազգերի ուսանողների ատամների գունային գամմայի համեմատական վերլուծություն,
- ստոմատոլոգիական ստատուսի և սպիտակեցումից հետո առաջացող բարդությունների միջև կորելացիոն կապի վերլուծություն,
- ստոմատոլոգիական ստատուսից կախված՝ պացիենտի ատամների սպիտակեցման անհատական օպտիմալ աստիճանի հաշվարկման բանաձևի դուրսբերում(մշակում, սահմանում):

Աշխատանքի գիտագործնական նշանակությունը

Աշխատանքն ունի կարևոր գիտագործնական նշանակություն և արժեք: Ատամների կարծր հյուսվածքների հանքայնացման աստիճանը բնութագրող միկրոտարածությունների ծավալի՝ սպիտակեցումից առաջ և հետո սահմանված ժամանակահատվածներում որոշելու և արդյունքների վերլուծության միջոցով դուրս է բերվել աշխատանքի կարևոր գիտագործնական նորույթներից մեկը, այն է՝ ստոմատոլոգիական ստատուսից կախված՝ բուժառուների ատամների սպիտակեցման անհատական օպտիմալ աստիճանի հաշվարկման բանաձևի սահմանումը: Վերջինը հնարավորություն է տալիս, ոչ միայն ճիշտ պլանավորել բուժման ծավալը՝ թերապևտիկ և օրթոպեդիկ մոտեցումների դեպքում, այլև սահմանում է ցուցումների ու հակացուցումների միջակայքեր՝ կանխելով վերահաս բարդությունները և ատամների կարծր հյուսվածքների անդառնալի փոփոխությունները:

Հեղինակը հիմնավորում է նաև պացիենտի ստոմատոլոգիական ստատուսի հաշվառմամբ՝ սպիտակեցման խնդրի նկատմամբ տարբերակված բուժական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը՝ կարիեսի նկատմամբ էմալի բարձր և միջին դիմադրողականություն ունեցող անձանց մասնագիտական և տնային սպիտակեցում առաջարկելիս՝ սպիտակեցման համակարգի օպտիմալ տեսակի

ալգորիթմի կիրառմամբ: Հեղինակն առաջարկում է նաև հնարավոր բարդությունների կանխարգելման և ռեաբիլիտացիայի ալգորիթմ: Ներկայացված գործնական առաջարկները ունեն գիտագործնական մեծ նշանակություն, հիմնված են հետազոտության արդյունքների վերլուծությամբ ստացված տվյալների վրա և լիովին իրագործելի են առաջատար բժիշկների գործունեության իրականացման համար: Դրանք մեծապես կօգնեն բժիշկ-ստոմատոլոգներին, թե՛ թերապևտիկ ստոմատոլոգիայի և թե՛ օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ոլորտներում՝ իրականացնելու բուժման ճիշտ պլանավորում, ինչը հնարավորություն կտա խուսափել անդառնալի բարդություններից և ապահովել բուժման կայուն արդյունք:

Ատենախոսության և սեղմագրի բովանդակության գնահատում

Ներկայացված ատենախոսական աշխատանքն իր կառուցվածքով լիովին համապատասխանում է գործող չափանիշներին և պահանջներին, ինչպես ծավալի (147 էջ), այնպես էլ կառուցվածքի տեսանկյունից: Աշխատանքում ընդգրկված հետազոտվողների թիվը եղել է 952: Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդաբանությունը հիմնված է ժամանակակից մոտեցումների վրա և ապահովում է ստացված արդյունքների օբյեկտիվությունը: Այդ արդյունքները մշակվել են համապատասխան վիճակագրական մեթոդներով, ինչը բարձրացնում է վերլուծության արժանահավատությունը: Աշխատանքում ընդգրկված կլինիկական տվյալները, ինչպես նաև համապատասխան աղյուսակները, գրաֆիկները և կլինիկական նկարները նպաստում են հետազոտության լիարժեք ներկայացմանը: Ատենախոսության հիմնական գիտական դրույթները և եզրակացությունները հստակ հիմնավորված են, տրամաբանական հաջորդականությամբ բխում են կատարված հետազոտությունների արդյունքներից:

Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են սեղմագրում:

Ատենախոսական աշխատանքի շրջանակներում տպագրվել է 10 գիտական հոդված՝ ԲՈԿ-ի կողմից առաջադրված՝ համապատասխան հրատարակումների համար առաջարկվող ցանկում ընդգրկված տեղական և միջազգային ամսագրերում: Հրատարակումներից 2-ը ազդեցության գործակցով ամսագրերում են և ունեն համապատասխանաբար 110 և 175 ցիտում՝ 3-4 տարիների ընթացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աննա Աշոտի Ավետիսյանի «Ատամների դիսկոլորիտների բուժման արդյունքների կանխատեսումը և բարդությունների կանխարգելումը՝ պայմանավորված բուժման մեթոդների ընտրությամբ» թեմայով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, արդիական թեմայով իրականացված գիտական աշխատանք է, որում կատարված գիտական և կլինիկական հետազոտությունների տվյալների համեմատական վերլուծությունները և ստացված արդյունքները կիրառելի են գործնական ստոմատոլոգիայում: Աշխատանքը հիմնված է մեթոդաբանական ճշգրիտ ուրվագծված գործադրելի նպատակի, հետազոտման ժամանակակից եղանակների և վիճակագրորեն հավաստի տվյալների վրա: Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին, իսկ ինքը՝ հեղինակ Աննա Աշոտի Ավետիսյանը, արժանի է հայցվող կոչմանը:

Աշխատանքը քննարկվել և հավանության է արժանացել «Երևան» բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ գիտական խորհրդի կողմից 2026թ. փետրվարի 2 -ին : Քննարկմանը մասնակցել են բ.գ.դ. պրոֆեսոր Յու. Մ. Պողոսյան, բ.գ.դ. պրոֆեսոր Ա. Լ. Չիլինգարյան, բ.գ.դ. պրոֆեսոր Լ.Գ. Թունյան , բ.գ.թ. Կ.Ա. Հակոբյան, Ա. Է. Կասյան , Ք.Ա. Քյուրջյան և գիտական խորհրդի այլ անդամներ :

«Երևան» բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ
տնօրեն՝ Հովիկ Բալյան

«Երևան» բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ
գիտական քարտուղար՝ Լ.Գ. Թունյան